Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-1079-31.01.2011-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. “Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին” Հայաստանի Հանրապետության 1996 թ-ի մարտի 4-ին ՀՕ-42 օրենքի /այսուհետ՝ օրենք/ 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՀՈԴՎԱԾ 24. Ախտաբանաանատոմիական գործունեություն

1. Ախտաբանաանատոմիական գործունեությունը բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը իրականացվում է ախտաբանաանատոմիական հետազոտությունների, ախտաբանաանատոմիական հերձումների եւ ախտաբանաանատոմիական փորձաքննության միջոցով:

2. Ախտաբանաանատոմիական հետազոտություններն իրականացվում են հիվանդությունների ախտորոշման նպատակով, համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում՝ որակավորում ունեցող մասնագետ–բժիշկների կողմից: Ախտաբանաանատոմիական հետազոտությունների ցանկը եւ անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ախտաբանաանատոմիական հերձումները իրականացվում են մահացած անձի մահվան պատճառը որոշելու եւ նրա հիվանդության ախտորոշումը ճշգրտելու նպատակով համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում՝ որակավորում ունեցող մասնագետ–բժիշկների կողմից: Ախտաբանաանատոմիական հերձումը կարող է իրականացվել եթե մահվան դեպքը չի հանդիսանում օրենսդրությամբ սահմանված դատաբժշկական փորձաքննության առարկա: Ախտաբանաանատոմիական հերձումների իրականացման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

4. Ախտաբանաանատոմիական հերձումները կարող են չիրականացվել՝ հիմք ընդունելով մահացածի կյանքի օրոք հայտնած կամքը, կամ նրա հարազատների կամ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5. Ախտաբանաանատոմիական հերձումները պարտադիր կարգով իրականացվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված որևիցե հիվանդության հետևանքով անձի մահվան դեպքում,
2) վարակիչ հիվանդությունների կամ դրանց առկայության հիմնավորված կասկածի դեպքում,
3) նորագոյացություններից մահվան դեպքերում, երբ բացակայում է ախտորոշման հյուսվածքաբանական հաստատումը (վերիֆիկացիան),
4) շուրջծննդյան (պերինատալ) մահացության դեպքում,
5) հղիների, ծննդականների և ծննդաբերների մահվան (մայրական մահացության) դեպքում,
6) այն դեպքում, երբ հիվանդը մահացել է բուժհաստատություն ընդունվելուց հետո՝ առաջին 24 ժամվա ընթացքում:

Պարտադիր կարգով իրականացվող ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

6. Մահվան կամ հիվանդության ախտորոշման վերաբերյալ ախտաբանաանատոմիական հետազոտության եզրակացությունը կցվում է մահացած անձի բժշկական փաստաթղթերին, իսկ դրա պահանջի դեպքում տրվում է նաև հարազատներին, օրինական ներկայացուցչին, ոստիկանությանը, դատախազությանը, ազգային անվտանգության ծառայությանը կամ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 2. Առաջարկվում է օրենքի 22-րդ հոդվածում որպես բժշկական փորձաքննության ձև ավելացնել ախտաբանաանատոմիական փորձաքննությունը և հոդվածի վերջում սահմանել այն հետևյալ շարադրանքով.

“Ախտաբանաանատոմիական փորձաքննությունը իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետի եւ այլ բժշկական մասնագետների մասնակցությամբ՝ ախտաբանական հետազոտությունների արդյունքների եւ կլինիկական տվյալների համադրման եւ վերջնական ախտորոշման հաստատման նպատակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի:”:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

““Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին” և ““Վարչական իրավախախտումների վերաբերյալ” Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին““ առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ
արված առարկությունների և առաջարկությունների

Առաջարկության հեղինակը		Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
1	ՀՀ Կառավարություն	1-ին հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով Հայաստանի Հանարապետության կառավարության 2008 թվականի մարտի 27ի թիվ 276 որոշմամբ հաստատված ցանկի երկրորդ կետի 13-րդ ենթակետը՝ առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 1-ին մասը “գործունեությունը” բառից հետո լրացնել “բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը” բառերով :	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
2	ՀՀ Կառավարություն	1-ին հոդվածի 2-րդ, 3-րդ, 8-րդ մասեր	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 8-րդ մասերը “համապատասխան” բառից հետո առաջարկվում է լրացնել “որակավորում ունեցող” բառերով: Միաժամանակ, առավել նպատակահարմար է սահմանել նաև համապատասխան մասնագետների շրջանակը, ովքեր իրավունք կունենան զբաղվելու ախտաբանաանատոմիական գործունեությամբ, ինչպես նաև հստակեցնել որոշ տերմինների և հասկացությունների օգտագործումը՝ ինչպիսիք են “բժշկական փաստաթղթեր”, “մահացածի կյանքի օրոք հայտնած կամք”:	Առաջարկությունն ընդունված է որոշակի խմբագրական փոփոխություններով: Իսկ ինչ վերաբերում է “բժշկական փաստաթղթեր”, “մահացածի կյանքի օրոք հայտնած կամք” արտահայտություններին, ապա դրանք արդեն իրենց հիմնավորումը ունեն համապատասխան օրենքներում:
3	ՀՀ Կառավարություն	Նախագծի ամբողջ տեքստ	Նախագծի համաձայն ախտաբանաանատոմիական տարբեր գործունեությունների իրականացման կարգերը սահմանվում են լիազոր մարմնի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է մեկ գործունեության տարատեսակների՝ նպատակահարմար է դրանք կարգավորել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Միաժամանակ, նախագծի ներքին հակասությունները վերացնելու նպատակով առաջարկվում է փոփոխվող հոդվածի 9-րդ մասը հանել, իսկ 2-րդ և 8-րդ մասերում համապատասխանաբար ամրագրել, որ ախտաբանաանատոմիական հետազոտության անցկացման կարգը և ախտաբանաանատոմիական փորձաքննության իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
4	ՀՀ Կառավարություն	1-ին հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 5-րդ մասում որպես պարտադիր հերձման պահանջ սահմանվել է միայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների առկայության դեպքը, մինչդեռ մի շարք այլ դեպքերում ևս անհրաժեշտ է իրականացնել պարտադիր ախտաբանաանատոմիական հերձումներ՝ մահվան	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

5	ՀՀ Կառավարություն ՀՀ Կառավարություն	1-ին հոդվածի 6-րդ մաս	պատճառները պարզելու նպատակով: Օրինակ, երբ հիվանդը մահացել է բուժհաստատություն ընդունվելուց հետո՝ առաջին 24 ժամվա ընթացքում, կամ, երբ ախտորոշումը հայտնի չէ և այլն: Այս առումով անհրաժեշտ է վերանայել պարտադիր հերձման դեպքերը, իսկ դրանց ցանկը սահմանել օրենքով: Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 7-րդ (վերջնական տարբերակի մեջ 6-րդ) մասում հստակեցնել կամ սահմանել օրենքի իմաստով կիրառվող “իրվապահ մարմիններ” հասկացությունը՝ նկատի ունենալով, որ այն որպես միասնական հասկացություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ և “իրվապահ մարմիններ” հասկացությունը, համաձայն ճյուղային օրենսդրության, կիրառվում է օրինակ՝ մաքսային և հարկային մարմինների նկատմամբ ևս: 2-րդ, 8-րդ և 9-րդ մասերը խմբագրել՝ նկատի ունենալով, որ առկա են հակասություններ. այսպես՝ 2-րդ մասում ասվում է, որ	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
6.		1-ին հոդվածի 2-րդ, 8-րդ, 9-րդ մասեր	ախտաբանաանատոմիական հետազոտության կարգը սահմանում է լիազոր մարմինը, իսկ 9-րդ մասում՝ կառավարությունը: 8-րդ մասում խոսվում է, որ “ախտաբանաանատոմիական փորձաքննությունը իրականացվում է լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով”, իսկ 9-րդ մասում սահմանվում է, որ փորձաքննության անցկացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, ինչը չի բխում “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
7	ՀՀ Կառավարություն	1-ին հոդվածի 10-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 10-րդ մասն առաջարկվում է հանել, քանի որ ախտաբանաանատոմիական թափոնները, ըստ էության, բժշկական վտանգավոր թափոններ են, որոնց ոչնչացման կարգը սահմանող պահանջները սանիտարական նորմեր են, որոնց սահմանելու լիազորությունը “Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված է առողջապահության բնագավառի լիազոր մարմնին:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
8 9	ՀՀ Կառավարություն ՀՀ Կառավարություն	 Նախագծի ամբողջ	Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվում է ավելացնել “Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված բժշկական փորձաքննությունների ձևերը՝ սահմանելով նաև “ախտաբանաանատոմիական փորձաքննություն” հասկացությունը, անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել օրենքի 22-րդ հոդվածով սահմանվող փորձաքննությունների ձևերում: Առաջարկում ենք նախագծում հստակեցնել “ախտաբանաանատոմիական գործունեություն”, “ախտաբանաանատոմիական հետազոտություն” և “ախտաբանաանատոմիական փորձաքննություն” հասկացությունների	Առաջարկությունն ընդունված է: Նախագիծը համալրվել է նոր՝ 2-րդ հոդվածով, ուստի նախկին 2-րդ հոդվածը համարել հոդված 3: Ինչպես և բժշկական փորձաքննության այլ տեսակները “ախտաբանաանատոմիական

		տեքստ	իրավական հիմքերը:	փորձաքննություն” և “ախտաբանաանատոմիական գործունեություն”, հասկացությունները իրենց բացատրությունը գտել են “Բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենքի 22-րդ և 24-րդ հոդվածներում:
10	ՀՀ Կառավարություն	վերնագիր	Նախագծի վերնագրում “լրացում” բառն անհրաժեշտ է փոխարինել “փոփոխություն” բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված է միայն փոփոխություն:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
11	ՀՀ Կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 3-ին հոդվածում (նախկին հոդված 2 “հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից” բառերն անհրաժեշտ է փոխարինել “հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը” բառերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև փաթեթում ընդգրկված “Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
12	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Կ. Ավագյան Ա. Բաբլոյան Մ.Մինասյան	1-ին հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության իմաստն աղավաղված է՝ կապված կետադրական նշանների հետ: Այս կապակցությամբ առաջարկում ենք այդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. “Ախտաբանաանատոմիական հետազոտություններն իրականացվում են հիվանդությունների ախտորոշման նպատակով, համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում՝ որակավորում ունեցող մասնագետ–բժիշկների կողմից:”:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
13	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Կ. Ավագյան Ա. Բաբլոյան Մ.Մինասյան	1-ին հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 3-րդ մաս առաջին նախադասության իմաստը հստակեցնելու, ինչպես նաև մահացած անձանց հիշատակման բացակայությունը շտկելու նպատակով առաջարկում ենք այդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. “Ախտաբանաանատոմիական հերձումները իրականացվում են մահացած անձի մահվան պատճառը որոշելու եւ նրա հիվանդության ախտորոշումը ճշգրտելու նպատակով համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում՝ որակավորում ունեցող մասնագետ–բժիշկների կողմից	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
14	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Կ. Ավագյան	Նախագծի ամբողջ տեքստ	Ամբողջ տեքստում “կառավարություն” բառի և դրա հոլովաձևերից առաջ անհրաժեշտ է ավելացնել “Հայաստանի Հանրապետության” բառերը՝ ելնելով “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասի	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան

	Ա. Բաբլոյան Մ.Մինասյան		պահանջից, համաձայն որի. “Արգելվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումների կրճատումները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսվածների:”:	փոփոխություններ:
15	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Կ. Ավագյան Ա. Բաբլոյան Մ.Մինասյան	1-ին հոդվածի 5-րդ մաս	5-րդ մասի առաջին նախադասության իմաստի հստակեցման նպատակով առաջարկում ենք “հիվանդությունների” բառը փոխարինել “հիվանդություններից որևէ մեկի հետևանքով անձի մահվան դեպքում” բառերով:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
16	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Կ. Ավագյան Ա. Բաբլոյան Մ.Մինասյան	24-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասեր	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է վերախմբագրել Օրենքի 24-րդ հոդվածը, որի 3-րդ և 6-րդ մասերը առաջարկում ենք համադրել, քանի որ դրանցում առկա է որոշակի հակասություն: Վերախմբավորված 3-րդ մասը համապատասխանաբար կսահմանվի. “3. Ախտաբանաանատոմիական հերձումները իրականացվում են մահացած անձի մահվան պատճառը որոշելու եւ նրա հիվանդության ախտորոշումը ճշգրտելու նպատակով համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում՝ որակավորում ունեցող մասնագետ–բժիշկների կողմից: Ախտաբանաանատոմիական հերձումը կարող է իրականացվել եթե մահվան դեպքը չի հանդիսանում օրենսդրությամբ սահմանված դատաբժշկական փորձաքննության առարկա: Ախտաբանաանատոմիական հերձումների իրականացման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:”:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ուստի փոփոխվել է համարակալումը:
17	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Կ. Ավագյան Ա. Բաբլոյան Մ.Մինասյան	1-ին հոդվածի 6-րդ մաս	Հստակեցման նկատառումներով առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխվող 24-րդ հոդվածի 7-րդ /նոր խմբագրությամբ 6-րդ/ մասը “կցվում է” բառից հետո լրացնել “մահացած անձի” բառերով, իսկ “տրվում է” բառից հետո՝ “նաև” բառը:	Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: